Խ. Ս. Հ. Մ. ՖԻՆԱՆՍ. ԺՈՂ. ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՊԵՏԱՊԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

# ՀՐԱՀԱՆԳ

ՇՐՋԱՆԱՅԻՆ-ՔԱՂԱՔԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՅԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

## ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ

ԴՐԱՄԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԱՇՎԱՌՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՅԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՍԽՀ ՊԵՏԱՊԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ 1936 Թ.

Թարգմ. ռուս. Լ. ՄԻՐԶԱԱՎԱԳՅԱՆ

Տեխ. խմբ. յեվ սրբ. Ա. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

# ИНСТРУКЦИЯ

По производству денежных операций, учету и отчетности по государственному страхованию для районных-городских финансовых отделов и страховых инспекций

ՔԱՆԱՔԵՌՇԻՆԻ ՏՊԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆ

Հանձնված ե արտադրության 15-ին դեկտեմբ. 1935 թ.
Ստորագրվ. տպագրվելու 29-ին հունվարի 1936 թ.

Գլավլիտ № 329 Պատվեր № 2 Տիրաժ 1000

31 JAN 2018

Հաստատում եմ՝
ԽՍՀՄ Ֆինժողկոմի տեղակալ,
ԱԲՈԼԻՆ
1925 թ. 1/6

# ՀՐԱՀԱՆԳ

## ՇՐՋԱՆԱՅԻՆ-ՔԱՂԱՔԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՅԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԱՇՎԱՌՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՅԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԴՐԱՄԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

### I. Պետապահովագրության միջոցների պահելն ու տնօրինելը:

1. Պետապի բոլոր դրամական միջոցները շրջանում պահվում են ընթացիկ հաշվում, վորը բացվում ե Պետբանկի տեղական բաժանմունքում կամ գործակալության մեջ շրջանային-քաղաքային ապահովագրական տեսչության անունով:

2. Պետական ապահովագրության բոլոր դրամական գործառնությունները (դրամ ընդունելն ու տալը) շրջանային կենտրոնում կատարվում են բացառապես հիշյալ ընթացիկ հաշվի միջոցով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Շրջանի ֆինանսական և ապահովագրական աշխատողներին կատեգորիկ կերպով արգելվում ե ապահովագրական վճարումներ և այլ մուծում-

ներ անմիջականորեն ստանալը ինչպես նաև ապահովագրական տեսչության ընթացիկ հաշվից կանխիկ դրամ ստանալն ու անմիջականորեն ապահովագրվողների վնասները հատուցելը։

2. Չի թույլատրվում շրջանային-քաղաքային ապահովագրական տեսչությունների անունով վորևե առանձին ընթացիկ հաշիվներ բանալը (օրինակ, նախազգուշական ձեռնարկումներ ֆինանսավորելու, վարչատնտեսական ծախսերը վճարելու համար և այլն)։

3. Միջոցների տնօրինության, ինչպես նաև պետական ապահովագրության բոլոր դրամական գործառնությունների պատասխանատվությունը շրջանում դրվում է շրջանային (քաղաքային) ֆինբաժնի վարիչի, ապահովագրական տեսչի և շրջ. (քաղ.) ֆինբաժնի հաշվապահի վրա։ Դրա համեմատ էլ, շրջանային քաղաքային ապահովագրական տեսչության՝ Պետբանկում ունեցած ընթացիկ հաշվից գումարներ կարելի յե վերցնել միմիայն յերեք ստորագրություն ունեցող չեկերով և հրամաններով (վճարման լիազորություն) այն է՝ առաջինը շրջ. (քաղ) ֆինբաժնի վարիչի ստորագրությունը, երկրորդն ապահովագրական տեսչի և յերրորդը շրջ. (քաղ.) ֆինբաժնի հաշվապահի։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Շրջ. (քաղ.) ֆինբաժնի վարիչի բացակայության դեպքում, ապահովագրական տեսչի ընթացիկ հաշվով տրված չեկում կամ հրամանում առաջինը ստորագրում է շրջգործկոմի նախագահը կամ նախագահության անդամը։ Ապահովագրական տեսչի բացակայության դեպքում յերկրորդ ստորագրությունը տրվում է յերկրորդ ապահովագրական տեսչին կամ տեսչի օգնականին (այնտեղ, վորտեղ յերկրորդ ապահովագրական տեսուչներ չկան)։

4. Ապահովագրական տեսչի ընթացիկ հաշվի հետ կապված բոլոր դրամական գործառնությունները (վճարումներ մուտք անելը, ընթացիկ հաշվից դրամ փոխանցելու, ապահովագրական վնասներ հատուցելու, հրդեհների և գյուղատնտեսական անասունների անկման դեմ պայքարելու ու դրանք կանխելու ձեռնարկումները ֆինանսավորելու, աշխատավարձ և վարչատնտեսական այլ ծախսեր վճարելու համար չեկեր և հրամաններ դուրս գրելը և այլն) անմիջականորեն շրջ (քաղ) ֆինբաժնի հաշվապահն է կատարում։



11-283829գր

5. Կանխիկ դրամը վճարվում է բանկային չեկերի (գերազանցապես անվանական) միջոցով, իսկ անդրամ հաշվարկի կարգով փոխանցումները՝ հրամաններով (վճարման հանձնարարություն)։

6. Ապահովագրական տեսչության ընթացիկ հաշվին վերաբերող բոլոր դրամական արդարացուցիչ փաստաթղթերն ու չեկային գրքույկները պահվում են շրջ. (քաղ.) ֆինբաժնի հաշվապահի մոտ, վորը պատասխանատու յե դրանց պահպանության համար։

7. Շրջանային-քաղաքային ապահովագրական տեսչությունների ընթացիկ հաշվում կարելի յե ազատ միջոցներ պահել վերադաս ապահովագրական որգանի կողմից սահմանված լիմիտներից վոչ ավելի չափով։

8. Այդ լիմիտից ավելի գումարները փոխանցվում են վերադաս ապահովագրական որգանի ընթացիկ հաշվին։ Այդ փոխանցումը սահմանված ժամկետներում և վոչ ավելի ուշ քան ամիսը յերեք անգամ կատարում է Պետբանկի ֆիլիալը, առանց վորևե հատուկ կարգադրության (ի բացառումն այս հրահանգի 3.րդ կետում նշված կարգի)։ Շրջ (քաղ.) ֆինբաժինների հաշվապահները, ինչպես նաև ապտեսուչները հսկում են և պատասխանատու յեն Պետբանկի բաժանմունքների կողմից այդ փոխանցման կարգը պահպանելու համար։

9. Առանձին դեպքերում, յերբ ապահովագրական հանձնաժողովի հաստատած ակտերով պետք է վնասներ վճարել ընթացիկ հաշվով սահմանված լիմիտից ավելի գումարի չափով, ապահովագրական տեսուչը և շրջֆինբաժնի հաշվապահը գերլիմիտային գումարները վերադաս որգանին փոխանցելու ժամկետը լրանալու նախորյակին պետք է հայտնեն Պետբանկի բաժանմունքին այն մասին, թե վորքան գումար պետք է թողնել ապահովագրական տեսչի ընթացիկ հաշվում վնասներ վճարելու համար։

10. Այն դեպքում, յերբ այդ միջոցներն էլ չեն բավարարի վնասներ վճարելու համար (օրինակ, վճարումների գանձման մասսայական կամպանիան ավարտելուց հետո), շրջ. (քաղ.) ֆինբաժնի հաշվապահը հայտ է ներկայացնում (վերոհիշյալ յերեք ստորագրություններով) վերադաս ապահովագրական որգանին ապահովագրական տեսչի ընթացիկ հաշիվը համապատասխան գումարով ուժեղացնելու համար։ Վորպեսզի վերադաս ապահով-

գրական օրգանը դրամի փոխադրումը չուշացնի և ավելորդ գրագրություն չստեղծվի, հայտերը պետք ե ներկայացնել վաղորոք, գրավոր ձևով, ցույց տալով թե ինչպիսի վնասներ վճարելու համար և լրացուցիչ գումար պահանջվում։

## II. Ապահովագրական վճարումների ընդունումը

11. Պարտադիր կոպարային ապահովագրության վճարումներ մտցնում են.

ա) Կոլտնտեսությունները և սկզբնական կոոպերատիվները, վորպես կանոն, Պետբանկը, ընթացիկ հաշվից գումարներ փոխանցելու միջոցով (անդրամ հաշվարկի կարգով)։ Կոլտնտեսությունների հարկերի և տուրքերի հաշվարկումը և գանձումը (նույն թվում նաև պարտ. կոպ. ապահ. ապվճարների) կատարում են անմիջականորեն շրջ. ֆին. բաժինները։ Այսպիսով գյուղխորհուրդների կողմից կոլտնտեսություններից ապահովավճարների գանձման պատահական դեպքերը հետագայում պետք ե վերացվեն։

բ) Կոլտնտեսականներն ու մենատնտեսները գյուղերում Պետբանկի բոլոր բաժանմունքները (վորտեղ այդպիսիք կան), խնայդրամարկղները, վորոնք կատարում են գյուղխորհուրդների դրամարկղային լրիվ սպասարկումը և գտնվում են այն տնտեսության վայրում, վորի համար ապահովագրական վճարումներ են կատարվում։ Սակայն, գյուղխորհուրդներն ապահովագրական վճարումները մուծվում են այն դեպքում միայն, յերբ գյուղխորհրդի վայրում չկա խնայդրամարկղ, վորին հանձնարարված ե գյուղխորհրդի դրամարկղային լրիվ սպասարկումը։

Կոլտնտեսականներից և մենատնտեսներից ապահովավճարները պետք ե ընդունվեն գյուղխորհրդի շենքում, գյուղխորհրդի գանձապահի կողմից, կամ այն անձնավորության, վորի վրա դրված ե գյուղխորհրդի կողմից գանձապահի պարտականությունը։

Սույն թվի հոկտեմբերի 1-ից պետք ե դադարեցվի գյուղերում հարկերի և ապահովավճարների գանձումը, գյուղխորհուրդների կողմից լիազորված զանազան անձնավորությունների և լուծարքի յենթարկվի հարկերի և ապվճարների գանձողների ինստիտուտը։ Այդ ժամանակվանից միայն կարող յեն հավաքել, հավաքարարների միջոցով՝ միմիայն կյանքի կոլլեկտիվ ապահովագրության ապահովավճարները (կոմսոդների հավաքարարների միջոցով)։ Քաղաքներում ապահովագրական վճարումները մուծվում են Պետբանկի բաժանմունքները։



Կոլտնտեսականներից և մենատնտեսներից ապահովագրական վճարումներ ընդունվում են վճարման հայտարարությունների հետ միասին, բացառությամբ այն դեպքերի, յերբ ապահովագրական վճարումները փոստով են փոխադրվում։ Յուրաքանչյուր մուծված գումարի համար գյուղխորհուրդներն ու խնայդրամարկղները պետապահովագրական անդորրագիր են տալիս վճարողին։ Առանց անդորրագիր տալու դրամ ընդունելն արգելված ե ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1933 թ. 17/7-ի վորոշմամբ։ ԽՍՀՄ ֆինժողկոմատի 1935 թ. 28/4—№ 353 կարգադրության համաձայն կոպարային ապահովագրության վճարումները 1935 թ. հուլիսի մեկից ընդունվում են բացառապես Պետնիշի պատրաստած անդորրագրերով և հին ձևի անդորրագրեր տալը կատեգորիկ կերպով արգելվում ե։ Շրջանային ապահովագրական տեսուչները պետք ե միջոցներ ձեռք առնեն, վորպեսզի կոպարային ապահովագրության վճարումներ ընդունող գյուղխորհուրդներն ու խնայդրամարկղներն ապահովված լինեն այդպիսի անդորրագրերով։

13. Գյուղխորհուրդներն, ստանալով անմիջականորեն վճարողից կոպարային ապահովագրության վճարումներ, գրանցում են դրամական մուտքի որագրում (թվարկում) և վճարողների անձնական հաշվում (տնտեսությունների մատյան, վորի մեջ հաշվի ե առնվում թե ինչպես ե բնակչությունը կատարում իր պարտականությունը պետության հանդեպ)։ Որվա վերջում գյուղխորհրդի ընդունած ապահովագրական վճարումների ընդհանուր գումարը գրանցվում ե դրամարկղային մատյանում և բացի այդ պետական հարկերի ապահովագրական և այլ վճարումների հաշվառման մատյանում, բաժանելով վճարողներին առանձին կատեգորիաների։

14. Պետական բանկի բաժանմունքներն, ստանալով անմիջականորեն մուծողներից ապահովագրական վճարումները (յերբ նրանք վճարման հայտարարություն չեն ներկայացնում), կազմում են Պետբանկի № 130 ձևով վճարման հաշվարկ յերեք որինակից, վորոնցից մեկը տրվում ե վճարողին անդորրագրի փոխարեն, յերկրորդը մնում ե Պետբանկում, իսկ յերրորդը շրջապտեսչության միջոցով ուղարկվում ե գյուղխորհրդը։ Վճարման

հայտարարությամբ մուծված գումարի հաշվարկը պետք է կազմել 2 օրինակից (մեկը Պետբանկի, իսկ մյուսը շրջապտեսչության համար)։ Այս դեպքում վճարողի համար որպես անդորրագիր ծառայում է վճարման հայտարարության վրա արված նշումը։

15. Խնայդրամարկղներն, ստանալով ապահովագրական վճարումները, իրենց ընդունած վճարումների ցուցակը (Թվարկ., ռեեստր) ամեն օր հանձնում են այն տնտեսության վայրում գտնվող գյուղխորհուրդներին, որոնց համար այդ վճարումներն են կատարվում։ Իսկ հավաքված գումարները խնայդրամարկղները սահմանված կարգով հանձնում են Պետբանկի շրջֆիլիալներին։

16. Գյուղխորհուրդներն, ստանալով խնայդրամարկղից օրագիրը (Թվարկ.), իսկ Պետբանկից վճարման հաշվարկը, պարտավոր են ստուգել թե ինչպես է բաշխված վճարողի կողմից կոպարի, ապառքի և տույժի, գումարները ճիշտ է, արդյոք հաշված և գանձված տույժը և անմիջապես նշել այդ մասին վճարողի անձնական հաշվում։

17. Անմիջականորեն մուծողներից ստացված ապահովագրական վճարումները, մինչև Պետբանկի բաժանմունքին հանձնելը պահվում են գյուղխորհրդի դրամարկղում։ Այդ գումարների ապահովության և ժամանակին հանձնելու պատասխանատվությունը կրում են գյուղխորհուրդների նախագահները։

18. Եթե գյուղխորհրդի վայրում Պետբանկի բաժանմունք չկա, ապա գյուղխորհրդի գանձապահը, կամ այն անձնավորությունը, որի վրա դրված է գ.խ. կողմից գանձապահի պարտականությունը յուրաքանչյուր օրվա վերջում իր ընդունած կոպարային ապահովագրական վճարումները հանձնում է Պետբանկի բաժանմունքին ապահովագրական տեսչի ընթացիկ հաշվին փոխանցելու համար։

Գյուղխորհրդի վայրում Պետբանկի բաժանմունք չլինելու դեպքում գյուղխորհրդի գանձապահը իր ընդունած ապահովագրական վճարումները հանձնում է Պետբանկի համապատասխան բաժանմունքին շրջանային ֆինբաժինների կողմից սահմանված կարգով և ժամկետում, բայց ոչ ավելի ուշ քան դեկադը յերեք անգամ։ Ապահովագրական վճարումները ֆինանսական և ապահովագրական տեսուչների և այլ անձանց միջոցով Պետբանկին հանձնելն արգելվում է։



19. Բոլոր ընդունված ապահովագրական վճարումները գյուղխորհուրդները Պետբանկին հանձնում են սահմանված ձևի ուղեկցող տեղեկագրերով, որոնց մեկ օրինակը Պետբանկը (դրամ ստանալու վերաբերյալ նշումով) վերադարձնում է գյուղխորհրդին, յերկրորդ օրինակն ուղարկում է շրջանային ապահովագրական տեսչությանը, իսկ յերրորդ օրինակը մնում է Պետբանկի բաժանմունքում։

Փոստով դրամ փոխադրելիս ուղեկցող տեղեկագրի մեկ օրինակը մնում է գյուղխորհրդում և նրան կցվում է փոստի ստացականն այն մասին, որ դրամն ընդունված է փոխադրելու համար։ Մյուս յերկու օրինակներն ուղարկվում են Պետբանկի դրամի փոխադրության հետ միաժամանակ։

20. Գյուղխորհուրդները ապահովագրական վճարումների հաշվին որևէ ծախսեր կատարել չեն կարող և պետք է այդ վճարումները լրիվ փոխանցեն Պետապի ընթացիկ հաշվին, բացառությամբ դրամ փոխադրելու հետ կապված փոստային ծախսերի, որոնց գումարը ցույց է տրվում ուղեկցող տեղեկագրում «փոստով փոխադրելու ծախսեր» տողում։

21. Կոլտնտեսություններն ու սկզբնական կոոպերատիվները Պետբանկի բաժանմունքն անդրամ հաշվարկի կարգով ապահովագրական վճարումներ մտցնելիս նույն բաժանմունքին հրաման են ներկայացնում 3 օրինակից, որի մեջ անպայման պետք է նշված լինի թե որքան ապառք է մտցվում, որքան կոպար և որքան տույժ։ Այդ հրամանները կոլտնտեսությունները և սկզբնական կոոպերատիվները կազմում են գյուղխորհուրդներից և շրջֆինբաժիններից ստացված վճարման հայտարարությունների հիման վրա։

Վճարումները ժամանակին չկատարելու դեպքում կոլտնտեսությունները հրամանի մեջ նշում են հասանելիք տույժի գումարը։ Հրամանի մեկ օրինակը (ապահովագրական վճարումները մուծելու վերաբերյալ նշումով) Պետբանկը վերադարձնում է կոլտնտեսությանը կամ սկզբնական կոոպերատիվին, յերկրորդ օրինակն ուղարկում է շրջանային ապահովագրական տեսչությանը, իսկ յերրորդը՝ թողնում է իր մոտ։ Ապահովագրական տեսչությունը ստանալով կոլտնտեսությունների և սկզբնական կոոպերատիվների հրամանների պատճենները, ստուգում է թե արդյոք ճիշտ է բաժանված ապառքի և տույժի վճարումների

գումարը, ճիշտ է հաշված տույժը և դրանցում է այդ վճարումները կոլտնտեսությունների և սկզբնական կոոպերատիվների անձնական հաշիվներում։

22. Ապահովագրական վճարումներ կանխիկ դրամով կոլտնտեսություններն ու սկզբնական կոոպերատիվները Պետբանկի բաժանմունքները մուծում են հոդված № 11-ի համաձայն։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—ԽՍՀՄ ֆինժողկոմատի 1935 թ. փետր. 1-ին № 113 կարգադրության համաձայն ապահովագրական վճարումների ապառքները գանձվում են կոլտնտեսություններից դատական կարգով։ Մինչև դատական օրգանների վորոշումները կոլտնտեսությունների ընթացիկ հաշիվներից ի մարումն ապահովագրական վճարումների ապառքների գումարներ դուրս գրելը կատեգորիկ կերպով արգելվում է։

Կոլտնտեսություններին հասանելիք, բայց դեռ չվճարված, ապահովագրական վարձատրության գումարներից, ապահովագրական վճարումների ապառքները պահվում են Պետբանկի վարչության 1934 թ. 9/9 № 2534 շրջաբերականով սահմանված կարգով (կոլտնտես. ընթացիկ հաշիվը վարկավորվում է հասանելիք ապահովագրական վարձատրության և գանձվելիք ապառքի միջև յեղած տարբերության չափով)։

Կատեգորիկ կերպով արգելվում է կոլտնտեսությունների վորևէ վճարումները մարելու, համար, ընթացիկ հաշիվներից փոխանցումներ կատարելու վերաբերյալ կարգադրություններ կամ կանխիկ դրամ կոլտնտեսություններից վերցնելը։

23. Կոլտնտեսությունների և սկզբնական կոոպերատիվների կողմից ապահովագրական վճարումները ժամանակին կատարելու, ինչպես նաև գյուղխորհուրդների և խնայդրամարկղների կողմից այդ գումարները Պետբանկի բաժանմունքը՝ շրջապատեսչությունների ընթացիկ հաշվին մուծելու գործի վրա սիստեմատիկ հսկողություն սահմանելու համար, շրջ. (քաղ.) ֆինբաժիններն ու շրջանային ապահովագրական տեսուչներն անձնական հաշիվներ են կազմում կոլտնտեսությունների և գյուղխորհուրդների համար և վերստուգում են գյուղխորհուրդների աշխատանքը պետապահովագրական գործողությունների գծով, ինչպես նաև անդորրագրերի արմատներով ստուգում են խնայդրամարկղների աշխատանքն ապահովագրական վճարումներ ընդունելու վերաբերյալ։



24. Գյուղխորհուրդների կոպարային ապահովագրության վճարումների ընդունման հետ կապված դրամական գործառնությունները հաշվի առնելու և ձևակերպելու նպատակով ԽՍՀՄ Ժողկոմխորհի վորոշմամբ 1935 թ. համար սահմանված են սկզբնական հաշվառման և հաշվետվության հետևյալ ձևերը։

1) Հիմնական արտադրական ցուցանիշների հաշվառման մատյաններ և տնտեսության մատյաններ... ձև № 1, 2ա, 2բ։

2) Տնտեսության մատյան բնակչության պարտավորությունների կատարումը հաշվի առնելու համար... ձև № 3.

3) Անդորրագիր հարկեր և ապահովագրական վճարումներ ընդունելու մասին ձև № 22.

4) Վճարման հայտարարություն հարկման մասին.... ձև № 20

5) Դրամական մուտքի օրագիր (թվարկ)

6) Ավելորդ վճարած գումարների վերադարձման ու դրանց հաշվարկի օրագիր (թվարկ.) վճարումների թերահաշվարկի և զեղչման օրագիր (թվարկ.)։ ձև № 23.

7) Ապառքավորների ցուցակ ըստ հարկերի և այլ վճարումների . . . . . . . . . . . . . . . . ձև № 24

8) Դրսմարկղային մատյան և անդորրագրային գրքույկների հաշվառման տեղեկագիր . . . . . ձև № 26

9) Պետական հարկերի, ապահովագրական և այլ վճարումների հաշվառման մատյան . . . . . . . ձև № 29

10) Ուղեկցող տեղեկագիր . . . . . . . . ձև № 33

11) Հաշվետվություն միջոցների մոբիլիզացիայի մասին (յուրաքանչյուր դեկադը մեկ անգամ) . . ձև № 15

12) Յեռամսյա հաշվետվություն ապառքների մասին . . . . . . . . . . . . . . . . . . ձև № 16

13) Հաշվետվություններ վճարումների հաշվարկման և մուտքի ու կոպարային ապահովագրության գծով արտոնություններ տալու մասին ձև № 24 և 25

Շրջ (քաղ.) ֆինբաժինները և շրջանային ու քաղաքային ապահովագրական տեսչությունները գյուղխորհուրդի՝ ապահովագրական վճարումներ ընդունելու վերաբերյալ աշխատանքն ստուգելիս պարտավոր են պահանջել վերոհիշյալ բոլոր տեսակի սկզբնական փաստաթղթերն, ու հաշվետվությունները և դրանցով ստուգել թե արդյոք վորքան ճիշտ են կատարել գյուղխորհուրդները պետական ապահովագրության դրամական գործառնությունները։

25. Գյուղխորհրդի վերստուգման արդյունքների մասին ֆինանսական կամ ապահովագրական տեսուչը պետք է ակտ կազմի յերկու օրինակից, վորոնցից մեկը թողնվում է գյուղխորհրդում, իսկ մյուսը պահվում ապահովագրական տեսչության գործերում։ Գյուղխորհրդի պաշտոնատար անձանց բոլոր ապօրինի գործողությունների մասին ապահովագրական տեսուչը պարտավոր է հայտնել շրջ (քաղ.) ֆինբաժնի վարիչին, հանցավորների վերաբերյալ անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելու համար։ Ապահովագրական տեսչության կողմից քննչական օրգաններին ուղարկված բոլոր գործերի ընթացքի վրա պետք է սիստեմատիկ հսկողություն (հաշվառում) սահմանված լինի։

26. Կամավոր ապահովագրության՝ գերկոպարային և կայուն նորմաներով, վճարումները կատարվում են հետևյալ կերպ՝

ա) կոլտնտեսությունները—Պետբանկի բաժանմունքը նույն կարգով, ինչ կարգով պարտադիր կոպարային ապահովագրության վճարումներն են կատարվում.

բ) կոլտնտեսականները և մենատնտեսները—գյուղխորհուրդներն ու Պետբանկի բաժանմունքները կանխիկ դրամով.

գ) քաղաքներում այդ վճարումները մուծվում են Պետբանկի բաժանմունքները։

27. Այդ տեսակի ապահովագրության վճարումներ կոլտնտեսականներն ու մենատնտեսները հիշյալ հիմնարկները մուծում են ապահովագրական հատուկ հայտարարություններ առաջադրելու ժամանակ։ Վճարումներ ընդունելու առթիվ գյուղխորհուրդները տալիս են Պետապի կողմից սահմանված ձևի անդորրագրեր, իսկ Պետբանկի բաժանմունքներն անդորրագրեր տալու փոխարեն ապահովագրական հայտարարության վրա նշումներ են անում դրամ ընդունելու մասին։

28. Գերկոպարային ապահովագրության և կայուն նորմաներով կնքվող ապահովագրության գծով ստացված վճարումները գյուղխորհուրդը գրանցում է գյուղխորհուրդների համար սահմանված ձևի օրագրում—թվարկում։ Այդ տեսակի վճարումներից (գերկոպարային և կայուն նորմաներով) յուրաքանչյուրը գրանցվում է օրագրի առանձին թերթում։ Հարկային և ապահովագրական վճարումների համար սահմանված ուղեկցող տեղեկագրի համապատասխան տողերում գյուղխորհուրդը նշում է, թե կամավոր ապահովագրական վճարումների ինչպիսի գումար է հանձն-



վում Պետբանկի բաժանմունքներին, ցույց տալով գումարն առանձին՝ գերկոպարային ու կայուն նորմաներով կնքվող ապահովագրության համար։

29. Տնային գույքի կամավոր ապահովագրության գծով ապահովագրական վճարումներ քաղաքներում մուծվում են խնայդրամարկղները, վորոնք դրամ ընդունելու առթիվ մուծողներին տալիս են սահմանված ձևի անդորրագրեր։ Տնային գույքի կոլլեկտիվ ապահովագրության վճարումները կարելի յե մուծել Պետբանկի բաժանմունքը։ Ձևակերպված կոլեկտիվներից վճարումներ ստանալու դեպքում թույլատրվում է մեկ ընդհանուր անդորրագիր (կամ Պետբանկի № 130 ձևի վճարման հաշվարկ) տալ այն հաշվով, վոր այդ ընդհանուր անդորրագրի հիման վրա շրջ. (քաղ.) ֆինբաժնի հաշվապահը յուրաքանչյուր ապահովագրվողին առանձին անդորրագիր տա։

Խնայդրամարկղներն ու Պետբանկի բաժանմունքները պետք է մատակարարել համապատասխան անդորրագրային գրքույկներ ապահովագրվողներին անդորրագրեր տալու համար։

30. Տնային գույքի կամավոր ապահովագրության վճարումների մուտքը խնայդրամարկղներն ամեն օր փոխանցում են շրջանային-քաղաքային ապահովագրական տեսչության՝ Պետբանկում ունեցած ընթացիկ հաշվին։ Փոխանցման հետ միաժամանակ խնայդրամարկղն ուղարկում է շրջապտեսչությանն անդորրագրերի յերկրորդ օրինակները։

31. Հանրայնացված սեկտորի (բնակշինկոոպի, արհեստ. և հասարակ. կազմակերպություն.) գույքի պարտադիր ապահովագրության վճարումները բացառապես Պետբանկի բաժանմունքները մուծվում են, ներկայացնելով միաժամանակ սահմանված ձևի հայտարարություններ, վորոնց մեջ ցույց է տրվում գումարի չափը, վոր ժամանակաշրջանի համար է վճարում կատարվում, տույժի չափը (ժամկետն անցնելու դեպքում) և այն հիմնարկի հասցեն, վորի համար վճարումներ են կատարվում։ Այդ ապահովագրության հաշվարկի մանրամասնությունները վճարողը լրացնում է վճարման հայտարարության մյուս յերեսին։

Վճարման հայտարարությունները ներկայացվում են յերեք օրինակ՝ մեկը մնում է Պետբանկում, մյուսը վերադարձվում է վճարողին, վճարում ընդունելու վերաբերյալ նշումով, յերրորդը կցվում է ապահովագրական տեսչության ընթացիկ հաշվի հերթական քաղվածքին։

32. Կյանքի անձնական (կոլեկտիվ) ապահովագրության վճարումները ձեռնարկություններում և հիմնարկներում հավաքում են հատուկ դրամահավաքները։ Իրենց ժողոված գումարները նրանք նույն որը մուծում են Ոժանդակող Հանձնաժողովի՝ ձեռնարկությանը կից խնայդրամարկղում (յեթե այդպիսին կա) ունեցած ընթացիկ հաշվին կամ անմիջականորեն Ոժանդակող Հանձնաժողովին։ Դրամահավաքներից վճարումներ ստանալուց հետո Ոժանդակող Հանձնաժողովն այդ գումարները խնայդրամարկղի միջոցով փոխանցում է Պետապի Պետբանկում ունեցած ընթացիկ հաշվին (անդրամ հաշվարկի կարգով), կամ թե Ոժանդակող Հանձնաժողովը վճարումներն անմիջականորեն դրամահավաքներից է ստացել, ապա մուծում է Պետբանկ, նույն ընթացիկ հաշվին կանխիկ դրամով, մեկ և մյուս դեպքում վոչ ուշ քան դրամ ստանալու պահից յերեք որվա ընթացքում և վոչ ուշ քան ապահովագրական վկայականներում ցույց տրված ամսական մուծումների ժամկետները։

Գյուղական վայրերում, կոլտնտեսություններից ստացված կոլեկտիվ ապահովագրության վճարումները դրամահավաքները նույն որը հանձնում են Ոժանդակող Հանձնաժողովին, կամ յեթե այդպիսին չկա, կոլտնտեսականների մեջ կոլեկտիվ ապահովագրության աշխատանք կատարելու համար լիազորված անձին։ Ոժանդակող Հանձնաժողովը կամ այդ լիազորը դրամահավաքներից ստացված գումարները փոխանցում է Պետապի՝ Պետբանկի տեղական բաժանմունքում ունեցած ընթացիկ հաշվին կամ յեթե տվյալ վայրում Պետբանկի բաժանմունք չկա, խնայդրամարկղի միջոցով փոխանցում է նույն ընթացիկ հաշվին կամ փոխադրում է փոստով։ Ոժանդակ Հանձնաժողովները խնայդրամարկղներում ունեցած իրենց ընթացիկ հաշիվներից Պետապի՝ Պետբանկում ունեցած ընթացիկ հաշիվները կյանքի կոլեկտիվ ապահովագրության վճարումներ փոխանցելու համար 0,6% կոմիսիա յեն վճարում խնայդրամարկղներին Ոժանդակող Հանձնաժողովների ոգտին Պետապի որգանների մասհանած տոկոսային վարձատրության գումարների հաշվին։

33. Կոլեկտիվ ապահովագրության և գործող բոլոր տեսակի անհատական ապահովագրության՝ կյանքի և դժբախտ պատահարներից ապահովագրվելու վճարումներն առանձին անձերից ստանում են վոչ պակաս քան մեկ հաստիքային աշխատող ունեցող խնայդրամարկղները։ Այդ գումարները վճարողները մուծում են իրենց կազմած վճարման հայտարարությունների հիման վրա։ Վճարումն ընդունելու մասին խնայդրամարկղները նշում են վճարման հայտարարության մեկ որինակի վրա, վորը հանձնվում է վճարողին։ Ստացված վճարումները, պահելով Ա. Գ. Դ. և Գ. Վ. գլխավոր վարչության հետ կնքված 1934 թ. 13/7 համաձայնությամբ սահմանված վարձատրությունը, խնայդրամարկղները ամեն որ փոխանցում են ապահովագրական տեսչության՝ Պետբանկում ունեցած ընթացիկ հաշվին և միաժամանակ ուղարկում են ապահովագրական տեսչությանը վճարողներից ստացված բոլոր հայտարարությունները։

34. Խնայդրամարկղների՝ Պետբանկի միջոցով ստացված անհատական ապահովագրական վճարումներն ապահովագրական տեսչությունը գրանցում է № 6 ձևի կոնտրոլ քարտում, վորը պետք է կազմել յուրաքանչյուր կոլեկտիվի համար առանձին։

35. Յերկաթուղային խնայդրամարկղներն իրենց հավաքած կոլեկտիվ և այլ տեսակի ապահովագրության (յերկաթուղում կնքված) գումարները, պահելով կոմիսիոն վարձատրությունը, յուրաքանչյուր դեկադը մեկ անգամ (10-ին, 20-ին և ամսվա վերջին որը) փոխանցում են Պետապի այն յերկրային (մարզային) վարչության հասցեյով, վորը ղեկավարում է ապահովագրական աշխատանքը տվյալ յերկաթուղու գծով, հետևյալ կերպ.—

ա) յեթե փոխանցվելիք վճարումների գումարը 1000 ռ. յե, ապա այդպիսին յերկաթուղային խնայդրամարկղը փոխանցում է Պետբանկի շրջֆիլիալը (ըստ իր կորեսպոնդական հաշվի վայրի), Պետապի վերոհիշյալ յերկրի (մարզի) ընթացիկ հաշվին փոխանցելու համար։

բ) յեթե գումարը 1000 ռ. ավելի փոքր է, ապա այդպիսին փոստով փոխադրվում է Պետապի նույն յերկրային (մարզային) վարչության հասցեյով, ցույց տալով փոխադրության կտրոնի վրա շրջխնայդրամարկղի համարը և անունը, ինչպես նաև այն, վոր փոխադրվող գումարը կազմում է խնայդրամարկղի ընդունած ապահովագրական վճարումները։

Այս փոխադրությունների հետ միաժամանակ շրջխնայդրամարկղն ուղարկում է փոստով Պետապի յերկրային (մարզային) վարչությանը վճարողներից ստացված բոլոր հայտարարությունները։ Ուղեկցող նամակում ցույց է տրվում կոլեկտիվ ապահո-

վագրության և մյուս տեսակի ապահովագրության համար առանձին՝ թե վորքան վճարողների հայտարարություններ են ուղարկվում, այդ հայտարարություններով ընդունված ապահովագրական վճարումների գումարը, պահված կոմիսիոն վարձատրության գումարը, պահված փոստային ծախսերի գումարը (դրամ փոխադրելու հետ կապված), փոխադրված կամ փոխանցված գումարը, փոստային անդորրագրի համարն ու թվականը (յեթե գումարը փոստով ե փոխադրված)։

36. Այն բոլոր վճարումները, վոր փաստորեն հավաքել են տրանսպորտային կազմակերպությունները (Կապի Ժողկոմատի որգանները, Սայուզտրանսի գրասենյակներն ու տվյալ շրջանի տերրիտորիայում գտնվող տեղական ավտոսայլային տրեստները) ուղեվորների պարտադիր ապահովագրության գծով, 1935 թ. ապրիլի 1-ից յուրաքանչյուր դեկադ պետք ե փոխանցել տեղական շրջանային-քաղաքային տեսչության՝ Պետբանկում ունեցած ընթացիկ հաշվին, յեթե հիշյալ տրանսպորտային կազմակերպությունների վայրում չկան Պետապի մարզային յերկրային վարչություններ։ Ապահովագրական տեսչությունները պետք ե սիստեմատիկորեն ստուգեն թե արդյոք ճիշտ և ժամանակին են հիշյալ կազմակերպությունները գանձել և Պետապի ընթացիկ հաշվին փոխանցել ուղևորների ապահովագրության վճարումները, պահանջելով այդ կազմակերպություններից ճիշտ և սպառիչ տեղեկություններ գանձված և փոխանցված գումարների մասին

Ուղևորներին յերկաթուղու ու ջրային ճանապարհներում (Ճան. Հաղ. Ժողկոմատ, Ջրերի ժողկոմատ) ապահովագրելու վճարումները մուծվում են կենտրոնացված կարգով Պետապի գլխավոր վարչության ընթացիկ հաշվին Մոսկվայում, իսկ օդային ճանապարհների ապահովագրության վճարումները՝ Աերոտորմիղի տերրիտորիալ վարչություններն իրենց վայրում գտնվող Պետապի յերկրային-մարզային վարչությունների ընթացիկ հաշվին։

## III. Պետապահովագրության միջոցների ծախսումը

37. Պետապի միջոցները զուտ նպատակային են և շրջանային ու քաղաքային ապահովագրական տեսչությունների ընթացիկ հաշիվներից գումարներ կարելի յե դուրս գրել միմիայն այն նպատակների համար, վորոնք անմիջականորեն կապված են



ապահովագրական գործի հետ և նախատեսված են ապահովագրական աշխատանքի վերաբերյալ կանոններով ու կանոնադրությամբ, այն ե՝

ա) ապահովագրական վարձատրության վճարում ապահովագրված գույքում վնասներ առաջ գալու, դժբախտ ու մահվան դեպքերի առթիվ։

բ) ծախսեր շրջանային և քաղաքային ապահովագրական տեսչությունների պահպանման համար և նախահաշվային վարկերով նախատեսված գործառնական ծախսեր։

գ) ծախսեր հրդեհի և գյուղատնտեսական անասունների դեմ պայքարելու նախազգուշական ձեռնարկումների համար.

դ) տոկոսային վարձատրություն (կոմիսիոն) կամավոր ապահովագրությամբ ընդգրկելու համար։

Այս ծախսերից դուրս, կամ նախահաշվային վարկերով չնախատեսված կամ ել այդ վարկերից ավելի չափով վորևե վարձատրություն տալը կամ ծախսեր կատարելն առանց ապահովագրական վերադաս որգանի նախնական համաձայնության չի թույլատրվում։

38. Շրջանային և քաղաքային ապահովագրական տեսչությունները կարող են ինքնուրույնաբար ապահովագրական վնասներ վճարել միմիայն շրջանային ապահովագրական հանձնաժողովների կողմից այդ վնասները հաստատելու դեպքում ու այն հատուկ լիմիտների սահմաններում, վորոնք սահմանել են վերադաս ապահովագրական որգանները տեսչությունների համար։ Վնասները վճարվում են շրջանային ապահովագրական հանձնաժողովների արձանագրությունների հիման վրա, իսկ այն վնասները, վորոնց չափը գերազանցում ե սահմանված լիմիտը (վնասների լուծարքման)՝ Պետապի վերադաս որգանի թույլտվության հիման վրա։

39. Կոլտնտեսությունների և հանրայնացված սեկտորի հիմնարկների ու ձեռնարկությունների ապահովագրական վնասները վճարում են բացառապես բանկերի միջոցով, ապահովագրվողների ընթացիկ հաշիվներին դրամ փոխանցելով։ Կոլտնտեսականների և մենատնտեսների վնասները վճարվում են Պետբանկի բաժանմունքների միջոցով (չեկեր դուրս գրելով Պետբանկի անվամբ), իսկ յեթե ապահովագրվողները գյուղական վայրերում են գտնվում՝ գյուղխնայդրամարկղի ու փոստի միջոցով հասանելիք գու-

ՀԱՅԳԱԶԻՆ ՀԱՄԱՐ
ԱՐԽԻՎ

*մարները փոխադրելով։ Պաշտոնատար անձանց միջոցով (գյուղխորհուրդների, ֆինանսական և ապահովագրական աշխատողների) ինչպես նաև գյուղխորհրդի հաշվից դրամ փոխադրելու միջոցով ապահովագրական վարձատրություն տալն արգելվում է։*

*40. Ապահովագրական վնասներ վճարելու մանրամասն կարգը սահմանված է Պետապի գլխավոր վարչության հատուկ հրահանգով, որը հաստատել է ԽՍՀՄ Ֆինժողկոմատի տեղակալ ընկ. Մանցևը 1934 թ. 28/8։ Նույն հրահանգի, (նմանապես 28/VII 34 թ. ապահովագրական վարձատրության հրահանգի § 9) միաժամանակ ապահովագրական վարձատրության վճարման հետ ՇՐՋ. ֆինբաժնի հաշվապահը նշում է լուծարքային ակտի վրա, շտամպի միջոցով «վճարման ժամանակը» և ստորագրում։*

*Կոլխոզներին հասանելիք վճարման ենթակա ապահովագրական վարձատրության շրջանառու միջոցների գումարները (ապրանքա-նյութերի արժեքների, հումույթի, սերմերի պաշարների և այլն), պետք է փոխանցել Պետբանկ, կոլտնտեսության ընթացիկ հաշվին, իսկ հասանելիք և ենթակա վճարման ապահովագրական վարձատրության հանրայնացված գույքի հիմնական միջոցների գումարները (աշխատավոր և մթերային անասունների, շենքերի, կառուցվածքների, գյուղ. մեքենաների և այլն) պետք է փոխանցեն սոցգյուղբանկ, կոլտնտեսության դրամագլխի կուտակման անբաժանելի ֆոնդի հաշվին։*

*41. Մահացության և հաշմանդամության դեպքերում անհատական ապահովագրության գծով ապահովագրական վարձատրություն վճարելիս, մինչև փաստացի վճարում կատարելը, պետք է այդ մասին հայտնել այն կոլեկտիվին, որտեղ ապահովագրվողն աշխատել է առաջադրված պահանջի ճշտությունը ստուգելու համար։*

*42. Բոլոր վարչա-տնտեսական և գործառնական ծախսերի համար շրջանային և քաղաքային ապահովագրական տեսչություններին Պետապի վերադաս օրգանը վարկեր է բաց թողնում (հատկացումներ նախահաշվով)։ Այդ վարկերի սահմաններում էլ ապահովագրական տեսչությունները կատարում են հիշատակված ծախսերը։*

*43. Աշխատավարձ ապահովագրական տեսչությունների աշխատակիցներին վճարվում է համաձայն հաստատված հաստիքների ու կոպարների, ինչպես նաև աշխատավարձի ֆոնդի այն*



*ստանդարտ տեղեկանքի, որն ուղարկում է Պետապի վերադաս օրգանը տվյալ յեռամսյակի համար։ Այլ նպատակ ունեցող (տընտեսական, գործուղման և այլն) վարկեր աշխատավարձ վճարելու համար օգտագործելը գործող օրենքներով չի թույլատրվում։*

*44. Վճարվող աշխատավարձից պետք է պահել, օրենքով սահմանված չափով և ժամկետներում, յեկամտային և ուրիշ հարկերը (կուլտ. բնակ. տուրք.) ՇՐՋ (քաղ.) ֆինբաժնի համապատասխան ընթացիկ հաշիվներին փոխանցելու համար, ինչպես նաև պահել պետփոխառությունների վճարումներն աշխատակիցների միջև կատարված բաժանորդագրության համաձայն։ Օրենքով սահմանված ժամկետներում տեղական արհեստակցական կազմակերպությունների ընթացիկ հաշվին պետք է փոխանցվեն նաև սոցիալական ապահովագրության մուծումները, որ ավելացվում են ապահովագրական տեսչությունների աշխատակիցների աշխատավարձին յեկամտի ընդհանուր գումարի 15,7%-ի չափով։ Աշխատավարձի վճարման հետ միասին տեղկոմին հանձնվում է աշխատավարձի մասհանման տոկոսը։*

*45. Աշխատավարձի լրացուցիչ տեսակներն, այն է՝ գործավարձային, արտաժամյա վարձատրությունն ու չօգտագործված արձակուրդի հատուցումն ապահովագրական տեսչությունների աշխատավորներին վճարվում են միմիայն Պետապի վերադաս վարչության թույլտվությամբ։*

*46. Նախահաշվով տրվող տնտեսական-գրասենյակային ծախսերի նորմաների հաշվին ապահովագրական տեսչությունները վճարում են՝ տեսչության զբաղեցրած շենքի վարձակալության և պահպանման ծախսերը (տեսչության վրա ընկնող մասը), գրասենյակային և փոստ-հեռագրական ծախսերը։ Հեռագրական ծախսեր պետք է կատարվեն բացառիկ դեպքերում միայն և այն էլ խիստ խնայողաբար, թույլ չտալով բազմաբառ հեռագրեր, հանելով ավելորդ բառեր և այլն։*

*47. Շրջանային ապահովագրական տեսուչների աշխատանքի վայրը համարվում է այն շրջանը, որը նրանք սպասարկում են։ Ուստի պաշտոնական շրջագայությունները շրջանում գործուղումներ չեն համարվում և չպետք է վարձատրվեն գործուղումների համար սահմանված նորմաներով։ Շրջագայությունների հետ կապված ծախսերի հատուցման համար Պետապի վարչությունները կայուն նորմաներ են սահմանում շրջանային ապա-*

հովագրական տեսուչների համար (վորոշ գումար մեկ ամսում) կամ յեթե Պետապի միջոցներով ձեռք բերված ձիեր կան, ապա վարկեր են բաց թողնվում այդ ձիերի պահպանման համար։ Շրջանային ապահովագրական տեսուչները պետք ե ունենան ճանապարհային մատյան, վորի մեջ գրանցվում են նրանց կատարած բոլոր շրջագայությունները՝ վավերացված մատյանի մեջ համապատասխան հիմնարկների և ձեռնարկությունների կողմից (գյուղխորհուրդների, կոլտնտեսությունների և այլն)։

48. Այն ծախսերը, վորոնք կապված են գյուղխորհուրդների աշխատողների և ապահովագրական ակտիվի խորհրդակցություններ գումարելու, մարզային կամ հանրապետական կենտրոնները նրանց պահանջմամբ մեկնելու, ինչպես նաև աշխատողների փոխադրման հետ կատարվում են յուրաքանչյուր առանձին դեպքում Պետապի վերադաս վարչության հատուկ թույլտվությունը ստանալուց հետո միայն և այդ նպատակի համար հատկացվող վարկերի սահմաններում։ Այդ ծախսերը կատարվում են Պետապի վերադաս վարչության հաշվին, ուղարկելով վերջինին ի հաստատություն բոլոր արդարացուցիչ փաստաթղթերը։ Փոխադրվող աշխատողին ճանապարհային ծախսերի համար ավանս տեսչությունը տալիս ե նույնպես վերադաս վարչության նախնական թույլտվությամբ միայն։ Փոխադրվողի հետ պետք ե լրիվ հաշվարկ կատարել աշխատավարձի և մինչ այդ վերցրած հաշվետու գումարների վերաբերյալ։

49. Շրջանային ապահովագրական հանձնաժողովների անդամներին, ինչպես նաև հողբաժինների գյուղատնտեսներին և անասնաբուժներին, վորոնք մեկնում են, վնասներ լուծարելու համար, շրջագայության դրամն ու օրապահիկը վճարվում ե ընդհանուր հիմունքներով (տեղերում գործող նորմաների համաձայն)։ Վնասներ լուծարելու համար տրվող վարկերի հաշվին կարելի յե վարձատրել նաև վնասների լուծարման և վճարումը ստուգելու նպատակով շրջանային ապահովագրական տեսուչների կատարած մեկնումները (իր շրջանում սիստեմատիկ գործուղումների համար սահմանված նորմաներով)։ Ապահովագրական տեսչությունները չպետք ե թույլ տան, վոր նշված վարկերից վարձատրվեն շրջանային ապահովագրական հանձնաժողովների անդամների և այլ աշխատողների շրջագայությունները ապահովագրական վնասների լուծարման հետ կապ չունեցող կամպանիաներ անցկացնելու ժամանակ։



50. Շենքերի վերագնահատման, ապահովագրական օբյեկտների հաշվառման, ապահովագրական վճարումներ վորոշելու և ծանուցագրեր գրելու հետ կապված ծախսերն այդ աշխատանքի համար հրավիրված անձանց վճարվում են Պետապի վերադաս վարչությունների սահմանած նորմաներով։

Այդ վարկերի հաշվին կարելի յե վարձատրել նաև, իր շրջանում սիստեմատիկ գործուղումներ կատարելու սահմանված նորմաներով, շրջանային ապահովագրական տեսուչների մեկնումները՝ օբյեկտներ վերագնահատելու կամ հաշվի առնելու ու ապահովագրական վճարումներ վորոշելու համար, ինչպես նաև վերահիշյալ աշխատանքների հետ կապված ինստրուկտիվ խորհրդակցություններ գումարելու ծախսերը (յեթե վերադաս ապահովագրական օրգանը հատկապես թույլատրել ե այդ խորհրդակցություններ կազմակերպելը), ինչպես նաև վճարման ծանուցագրերի առաքման հետ կապված ծախսերը։

51. Այն ծախսերը, վոր կատարում են գյուղխորհուրդները Պետբանկի բաժանմունքը փոստով դրամ փոխադրելու համար, գյուղխորհուրդն անմիջականորեն պահում ե ապահովագրական վճարումներից, ցույց տալով փոխադրական արժեքն ուղեկցող տեղեկագրերում։ Նման բոլոր պահումներն ապահովագրական տեսչությունը գրում ե դրամի փոխադրության հետ կապված ծախսերի հաշվին, իսկ գյուղխորհուրդների հավաքած ապահովագրական վճարումների գումարները լրիվ մուտք են արվում (առանց հանելու փոխադրության ծախսերը)։ Այն դեպքում, յերբ գյուղխորհուրդն ապահովագրական վճարումների հետ միասին փոխադրում ե նաև այլ վճարումներ (մեկ ուղեկցող տեղեկագրով), փոխադրության ծախսերը կոպարային ապահովագրությանը պետք ե վերագրել այն մասում, վորը համապատասխանում ե ապահովագրական վճարումների փոխադրված գումարին։ Պարգևներ գյուղխորհուրդների աշխատողներին, գյուղական և ապահովագրական հանձնաժողովների անդամներին, ապահովագրական ակտիվին, շրջ(քաղ.) ֆինբաժինների և շրջանային-քաղաքային ապահովագրական տեսչությունների աշխատակիցներին պետական ապահովագրության առաջադրանքներն ու աշխատանքներն առանձնապես հաջող կատարելու համար տրվում են միմիայն վերադաս ապահովագրական օրգանի հատուկ կարգադրությամբ։

52. Շենքեր վերագնահատողներին, օբյեկտներ հաշվի առնողներին ու ապահովագրական վճարումների չափը վորոշողներին վարձատրելու, ինչպես նաև ապահովագրական ակտիվին պարգևներ ու այլ տեսակի վարձատրություն տալու համար շրջ(քաղ). ֆինբաժնի կամ ապահովագրական ապարատի աշխատակիցների ձեռքը դրամ տալը վորպես կանոն չի թույլատրվում: Այդ վարձատրության համար կամ չեկ է տրվում բանկի անվամբ կամ դրամը փոխադրվում է փոստով:

53. Մասնավոր սեկտորը կամավոր գույքային ապահովագրությամբ ընդգրկելու, գերկոպարային ու կայուն նորմաներով ապահովագրություններ և կյանքի ապահովագրություններ կնքելու համար տոկոսային վարձատրություն է վճարվում հասարակական կազմակերպություններին, խնայդրամարկղներին, գյուղխորհուրդներին և կողմնակի անձանց, վորոնք կատարել են այդ աշխատանքը, Պետապի համապատասխան հրահանգներով սահմանված կարգով և չափերով: Տոկոսային վարձատրություն վճարվում է ապահովագրական վճարումները լրիվ ստանալիս միայն կամ ժամկետը յերկարացնելու դեպքում՝ ապահովագրվածի կողմից առաջին հերթական վճարումը կատարելուց հետո: Բոլոր դեպքերում էլ վարձատրությունը պետք է հաշվել փաստորեն ստացված վճարման գումարից, այլ վոչ հասանելիք գումարից:

54. Հիմնարկներին և կազմակերպություններին հրդեհների և գյուղատնտեսական անասունների անկման դեմ պայքարելու նախազգուշական ձեռնարկումներ անցկացնելու համար կոպարային ապահովագրության գանձումների հատուկ տոկոսային մասհանումների հաշվին գումարներ շրջանային և քաղաքային ապահովագրական տեսչությունները վճարում են միմիայն Պետապի վերադաս վարչության հատուկ թույլտվությամբ և շրջգործկոմի և Պետապի վարչության հաստատած պլանների հիման վրա և միմիայն այն ձեռնարկումների համար, վորոնց ֆինանսավորումը չի նախատեսնված հատուկ բանկերի հետ կնքված պայմանագրերում, այսինքն, վոչ կապիտալ ներդրումների համար:

Հիմնարկներին և կազմակերպություններին հիշյալ նպատակների համար, ինչպես նաև ապահովագրական տեսչությունների մնացած բոլոր դրամական գործառնությունների համար շրջ(քաղ.) ֆինբաժնի հաշվապահը, ապահովագրական տեսչության հայտերի և նախազգուշական ձեռնարկումների հաստատված պլանների կամ ապահովագրական վերադաս օրգանի հատուկ թույլտվության համաձայն հրաման է դուրս գրում Պետբանկի անվամբ համապատասխան գումար բաց թողնելու մասին:



55. Անմիջականորեն մուծողներից կոպարային ապահովագրական վճարումներ ընդունելու աշխատանքի համար գյուղական խնայդրամարկղներին (գյուղխորհուրդների լրիվ դրամարկղային սպասարկման կարգով) վճարվում է նրանց կողմից փաստորեն ժողոված վճարումների 1,6%-ը: Գյուղական խնայդրամարկղը կոպարային ապահովագրության վճարումների գումարն ամբողջովին փոխանցում է ապահովագրական տեսչության՝ Պետապի բաժանմունքում ունեցած ընթացիկ հաշվին, իսկ 1,6% կոմիսիան վորոշում է շրջանային խնայդրամարկղը: Խնայդրամարկղն ամիսը մեկ անգամ տեղեկանք է ներկայացնում հասանելիք կոմիսիոն վարձատրության մասին և դրա հիման վրա Պետբանկը վճարում է շրջխնայդրամարկղին ամբողջ շրջանի գյուղական խնայդրամարկղներին հասանելիք կոմիսիոն գումարները:

Ապահովագրական տեսչությունը պետք է ստուգի գյուղխորհուրդների անձնական հաշիվներով (վորոնց սպասարկում են գյուղխնայդրամարկղները) թե արդյոք ճիշտ է պահել Պետբանկը մասհանումները խնայդրամարկղների օգտին:

56. Տեսուչներին և ապահովագրական վերադաս օրգանի այլ ներկայացուցիչներին վորևէ գումարներ (ավանսներ գործուղումների հետ կապված ծախսերի համար և այլն) վճարվում են այն հատուկ կարգադրություններ—ակրեդիտիվների հիման վրա, վոր տալիս է հիշյալ օրգանը: Առանց ակրեդիտիվ առաջադրելու (միմիայն անձնական խնդրով) գործուղվողներին գումարներ վճարելը, կամ ակրեդիտիվում նշվածից ավելի վճարելը կատեգորիկ կերպով արգելվում է:

Ակրեդիտիվներով դրամ վճարելիս ապահովագրական տեսչությունը շրջ (քաղ.) ֆինբաժնի հաշվապահը) ստորագրություն է վերցնում գործուղվողից դրամ ստանալու մասին, նշում է ակրեդիտիվի վրա վճարված գումարը և անմիջապես հայտնում է այդ մասին վերադաս ապահովագրական օրգանին:

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ

## 1. Հիմնական հաշվապահական հաշվառումը

57. Պետական ապահովագրական դրամական գործառնությունների, այսինքն, շրջանային- քաղաքային տեսչության ընթացիկ հաշվի գործառնությունների հաշվառումը կատարում է շրջ (քաղ.) ֆինբաժնի հաշվապահը։

58. Այդ հաշվառման համար շրջ (քաղ.) ֆինբաժնի հաշվապահն ընթացիկ հաշիվների մատյանում (տես շրջֆինբաժինների հաշվետվության և հաշվետարության վերաբերյալ հրահանգը) առանձին հաշիվ է բացում Պետական ապահովագրության գործառնությունների համար, գրանցում է այդ ընթացիկ հաշվում մուծված և վճարված գումարները։

59. Այդ գրանցումները շրջ (քաղ.) ֆինբաժնի հաշվապահը հետևյալ կերպ է կատարում.—

ա) մուտքի մասում

Ապահովագրական տեսչության ընթացիկ հաշվի Պետբանկից ստացված քաղվածքների կամ ավիզոյի հիման վրա, ապահովագրական վճարումների ընդհանուր գումարը, քաղվածքում նշված ժամանակաշրջանի համար (առանց ստորաբաժանելու ապահովագրության տեսակների), իսկ Պետապի վերադաս վարչության փոխադարձ գումարները՝ յուրաքանչյուր փոխադրությունն առանձին։

բ) ելքի մասում.—Ժամանակագրական կարգով, որ չափով որ Պետապի միջոցների հաշվին կատարված ծախսերի վերաբերյալ հրամաններ կամ չեկեր է տրված յեղել կամ ընթացիկ հաշվի վերաբերյալ Պետբանկի տված քաղվածքի տեղեկություններով այն բոլոր միջոցները, որ անմիջականորեն Պետբանկն է փոխանցել (գերլիմիտային գումարների փոխադրություն Պետապի վարչությանը, կոմիսիոն վարձատրություն խնայդրամարկղներին կապարային վճարումներ ընդունելու համար)։

60. Այդ ընթացիկ հաշվով ծախսեր գրանցելիս հաշվապահը համառոտակի ցույց է տալիս ծախսի անունը (տեսակ) այն է՝ ապահովագրական վարձատրություն, վարչա-տնտեսական ծախսեր, տոկոսային վարձատրություն, նախազգուշական ձեռնարկումների համար, փոխադրված է Պետապի վարչությանը և այլն։

61. Այդ ընթացիկ հաշվի գրանցումներն ու դրամի մնացորդը պետք է ամեն օր համեմատել Պետբանկի բաժանմունքի տվյալների հետ և անմիջապես ուղղել նկատված անճշտությունները։



62. Յուրաքանչյուր ամսվա վերջում պետք է տալ այդ ամսվա մուտքի և ելքի ընդհանուր հանրագումարը, գրանցումները համեմատել փաստաթղթերի հետ և տալ ապահովագրական տեսչության ընթացիկ հաշվի առ 1-ն հաջորդ ամսվա մնացորդ գումարը։ Այդ մնացորդը պետք է համեմատել Պետբանկի բաժանմունքի տվյալների հետ։

63. Պետապահովագրության գործառնությունների այդ հիմնական հաշվապահական հաշվառումը պարտադիր է և նրա ճիշտ ու ժամանակին կատարելու պատասխանատվությունը դրվում է շրջ (քաղ.) ֆինբաժնի հաշվապահի վրա։

## 2. Օժանդակ մանրամասն հաշվառումը

64. Պետապահովագրության գործառնությունների հիմնական հաշվապահական հաշվառմանը որպես լրացում կատարվում է նաև օժանդակ մանրամասն հաշվառում։ Այդ հաշվառման նպատակն այն է, որպեսզի՝ ա) մանրամասնել գործառնություններն ըստ նրանց տեսակների, ապահովագրության տեսակների և ծախսերի տեսակների, բ) հնարավոր դարձնել այդ գործառնությունների վերլուծությունը, գ) տալ պատրաստի ամփոփում պետական ապահովագրության ֆինանսական հաշվետվություն կազմելու համար։ Այդ հաշվառումը կատարում են անմիջականորեն ապահովագրական տեսուչները։

65. Այդ հաշվառումը կատարելու համար որպես սկզբնական նյութեր հանդիսանում են՝

1) Մուտքի մասում՝ շրջ (քաղ.) ֆինբաժինների ստացած ապահովագրական տեսչությունների ընթացիկ հաշիվների քաղվածքներն ու դրան կցվող կամ փոխադրվող հատուկ փաստաթղթերն, այն է՝ գյուղխորհուրդների ուղեկցող տեղեկագրերը, հրամաններ կոլտնտեսությունների վճարումներ կատարելու մասին, փաստաթղթեր խնայդրամարկղների կողմից ապահովագրական վճարումներ կատարելու մասին, № 130 ձևի վճարման հաշվարկներ Պետբանկի ընդունած վճարումների համար, դիմումներ հանրայնացված սեկտորի գույքի ապահովագրական վճարումներ կատարելու մասին, վճարողների հայտարարությունը անձնական ապահովագրության գծով և այլն։

2) Ելքի մասում՝ քաղվածքներ ապահովագրական տեսչու-

թյունների ընթացիկ հաշիվներից, շրջանային ապահովագրական հանձնաժողովների արձանագրություններ վնասներ վճարելու մասին և ապահովագրական ակտեր, Պետապի վերադաս օրգանների հաստատած պլաններ և կարգադրություններ նախազգուշական ձեռնարկումներ ֆինանսավորելու համար, արդարացուցիչ փաստաթղթեր վարչա-տնտեսական ծախսերի վճարման և այլն։

66. Մանրամասն հաշվառումը կատարվում է ելք և մուտք գործառնությունների մատյանով և ապահովագրական վարձատրության վճարման մատյանով։

Այդ երկու մատյաններում գործառնությունները գրանցվում են ոչ թե յուրաքանչյուր փաստաթղթով առանձին, այլ գումարվում են և գրանցվում ընդհանուր հանրագումարով մեկ կամ մի քանի օրվա, բայց ոչ ավելի քան հինգ օրվա համար։

67. Ելք և մուտք գործառնությունների մատյանը կազմված է ապահովագրական տեսչությունների ֆինանսական հաշվետվության ձևով նախատեսված ցուցանիշների համեմատ (բացառությամբ ապահովագրական վնասների, որոնց վերաբերյալ մատյանում մանրամասնություններ ցույց չեն տրվում)։

68. Այդ մատյանի ելքի գրանցումները հետևյալ կերպ են կատարվում՝

ա) «Ընդամենը մուտք է եղել» սյունյակում ցույց է տրվում մուտքի շրջանառությունների ամբողջ գումարը, որոնք նույն տողում են գրվում, այսինքն այն ամբողջ ժամանակաշրջանի վերաբերյալ, որի համար նշում է արվում։

բ) «Ապահովագրական վճարումներ»-ի համապատասխան սյունյակներով վճարումները բաժանվում են ապահովագրության տեսակների, գյուղի և քաղաքի և սոցիալական խմբերի (վճարումներն ըստ կոլտնտեսությունների և մենատնտեսների բաժանվում են միջոցների մոբիլիզացիայի հաշվետու նյութերի հիման վրա)։

գ) «Ստացված է վարչությունից» սյունյակում ցույց է տրվում վերադաս ապահովագրական օրգանի փոխադրած յուրաքանչյուր գումարն առանձին։

69. Ելքի մասում գրանցվում են՝

ա) «Ընդամենը վճարված է» սյունյակում բոլոր այն վճարման ընդհանուր գումարները, որոնք գրվում են նույն տողում։

բ) «Ապահովագրական վարձատրություն» սյունյակում ապահովագրական վնասների հատուցման ընդհանուր գումարն ա-



ռանց բաժանելու ապահովագրության տեսակների և այլ մանրամասնությունների, որոնք տրվում են ապահովագրության վարձատրության վճարման մատյանում։

գ) Համապատասխան սյունյակներում նախազգուշական ձեռնարկումների ֆինանսավորման, կամավոր ապահովագրության տոկոսային վարձատրության, վարչա-տնտեսական ծախսերի և այլ գումարներ։ Բացի փաստորեն կատարված վարչա-տնտեսական ծախքերի գումարների գրանցումներից, պետք է նաև հաշվի առնել այդ նպատակով հատկացրած գումարները, որի համար պետք է ելքից գրքի վարչա-տնտ-ծախքերի սյունյակների վերնագրերում նշանակել նախահաշվով հատկացրած գումարները։

դ) «Փոխադրված է վարչությանը», սյունյակում վերադաս ապահովագրական օրգանին փոխադրված յուրաքանչյուր գումարն առանձին։

70. Ելք և մուտք գործառնությունների մատյանում կատարված գրանցումները (ոչ ուշ քան հնգօրյակում մեկ անգամ) պետք է համեմատել պետապահովագրության գործառնությունների հաշվապահական հիմնական հաշվառման գրանցումների հետ, որ կատարում է շրջ(քաղ.) ֆինբաժնի հաշվապահը։

71. Ամսվա վերջում պետք է հաշվել ելքի և մուտքի հանրագումարը հաշվառման ձևերով նախատեսված բոլոր սյունյակներով և տալ առ 1-ն հաջորդ ամսվա մնացորդ գումարը, որը պետք է ճիշտ համապատասխանի պետական ապահովագրության գործառնությունների ընթացիկ հաշվի (որը վարում է շրջ.(քաղ.) ֆինբաժնի հաշվապահը) մնացորդ գումարին և նույն ընթացիկ հաշվից Պետբանկի տված քաղվածքներում հիշատակված մնացորդ գումարին։

Այն դեպքերում, երբ մատյանի նշումները չեն համապատասխանում հիմնական հաշվապահական հաշվառման տվյալներին և Պետբանկի տվյալներին, ապահովագրական տեսչությունն անմիջապես միջոցներ է ձեռք առնում գրանցումներն ստուգելու և ուղղելու համար։

72. Գրանցումներն ապահովագրական վարձատրության վճարման մատյանում և ելք ու մուտք գործառնությունների մատյանում կատարվում են միաժամանակ։

«Ընդամենը վճարված է» սյունյակում ցույց է տրվում վնասների հատուցման ընդհանուր գումարը, վորոնք գրանցվում են մատյանի նույն տողում։ Մնացած սյունյակներում հատուցման գումարները բաժանվում են ըստ ապահովագրության տեսակների, գյուղի, քաղաքի և սոցիալական խմբերի։ Այդ բաժանման համար վորպես նյութ ծառայում են շրջանային ապահովագրական հանձնաժողովի արձանագրությունները ու ապահովագրական ակտերը։

73. Այդ մատյանում գրանցվող հատուցման գումարները պետք է ճիշտ համապատասխանեն վնասների հատուցման այն ընդհանուր գումարին, վորը ցույց է տրվում յել և մուծ գործառնությունների մատյանի «Ապահովագրական վարձատրություն» ցելքի սյունյակին։ Այդ գումարներն իրար չհամապատասխանելու դեպքում անմիջապես պետք է միջոցներ ձեռք առնել գրանցումները համեմատելու և ուղղելու համար.

Բացի նշված մանրամասն հաշվառումից ապահովագրական տեսչությունը կատարում է նաև հետևյալ տեսակի հաշվառումներ։

## 3. Հանրայնացված սեկտորի գույքի ապահովագրության վճարումների հաշվառում (ապահովագրական վճարումների մուծմամբ)

74. Հանրայնացված սեկտորի գույքի պարտադիր ապահովագրության վճարումների հաշվառումը կատարվում է հետևյալ նպատակներով։

ա) մեկ տարվա համար հաշված վճարումների ընդհանուր գումարը վորոշելու համար։

բ) հասանելիք վճարումները ժամանակին մուծելու վրա հսկելու համար.

գ) շրջանառու միջոցների պրեմյաների հաշվարկներն ապահովադրողների կողմից ժամանակին ներկայացնելու վրա հսկելու համար։



75. Այդ հաշվառումը կատարվում է հետևյալ ձևի քարտերով։

............................................ ............................................
(ապահովագրվողի անունը) (հասցեն)

| Ապառք անցյալ տարվա համար | Մեկ տարվա համար հաշված է | Հիմնական միջոցների ապահով. գծով | | | | Շրջանառու միջ. ապահով. գծով | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Պետք է մուծել հետևյալ ժամկետներ. | | Վճարված է | | Պետք է վճարել հետևյալ ժամկետներում | | Վճարված է | |
| | | Թվակ. | Գումար | Թվակ. | Գումար | Ցետամս. | Գումար | Թվակեր | Գումար |
| | | | | | | | | | |

Այնպիսի տեղեկություններ՝ ինչպես՝ ապահովագրվողի անունը, հիմնական միջոցների տարեկան պրեմյաների և շրջանառության միջոցների յեռամսյա պրեմյաների գումարները ցույց են տրվում ապահովագրվողների ներկայացրած հայտարարությունների հիման վրա, հանրայնացված սեկտորի գույքի պարտադիր ապահովագրության կանոնների § § 10 և 11-ի համաձայն։ Հիմնական միջոցների ապահովագրության հերթական վճարումների մուծման գումարներն ու ժամկետներն ապահովագրական տեսուչը սահմանում է նույն կանոնների § 15 հիման վրա։ Հերթական վճարումների գումարների դիմաց ցույց է տրվում փաստորեն մուծված գումարները։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Քանի վոր շրջանառու միջոցներն ապահովագրվում են ըստ յեռամսյակների, վճարումների՝ տարկետումն, անկախ դրանց չափից, չի թույլատրվում։

## 4. Վճարումների հաշվառումը կոլտնտեսությունների յեվ գյուղտնտեսությունների անձնական հաշիվներով

77. Վճարումների հաշվառում կոլտնտեսությունների անձնական հաշիվներով հետևյալ ձևի քարտերով է կատարվում։

.................................................................................

.............................կոլտնտեսության անձնական հաշիվը

.............................(գյուղխորհրդի հասցեն)

| | Անցյալ տարիների ապառք | Ընթաց. տարվա վճար | | | Տույժ | Ընդամենը | Վճարման ժամանակ տույժ հաշված ե |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1-ին ժամկ. | 2-րդ ժամկ. | | | | |
| Հաշված ե . . . | | | | | | | |
| Ավելացված ե . | | | | | | | |
| Հանված ե . . . | | | | | | | |
| Ջնջված ե . . . | | | | | | | |
| Ընդամենը . . . | | | | | | | |
| Մնում ե ապառք | | | | | | | |

Կոլտնտեսությունների անձնական հաշիվներում ցույց ե տրվում թե վորքան ապառք անցյալ տարիների համար և վորքան նոր կոպարի վճարումներ ե հաշված ու ավելացված տվյալ կոլտնտեսության համար, վորքան ե ջնջված արտոնությունների կարգով կամ հանված և այնուհետև գրանցվում են վճարումները համաձայն ապահովագրական տեսչությունների ընթացիկ հաշվի քաղվածքների և կոլտնտեսությունների հրամանների՝ իր ընթացիկ հաշվից ի մարումն ապահովագրական վճարումների դրամ փոխանցելու մասին։

79. Վճարումները գյուղխորհուրդների անձնական հաշիվներով հաշվի յեն առնվում (ըստ յուրաքանչյուր գյուղխորհրդի ընդհանուր հանրագումարներով) հետևյալ ձևի քարտերով։

Պարտադիր կոպարային ..............................գյուղխոր. անձն. հաշիվ. ապահով.

կոլտնտեսութ. կոլտնտես. մենատնտես.

Առաջադրված են վճարումներ, ներառյալ ապառքը . .................. .................. ..................



Ավելացված են վճարումներ .................. .................. ..................

Լրացուցիչ ջնջված ե . . .................. .................. ..................

Մ Ո Ւ Տ Ք

| Գյուղխորհրդի գործառնական տվյալներով | | | | Պետբանկի տվյալներով | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Վոր ժամանակի համար | Կոլտնտեսություններից | Կոլտնտեսականներից | Մենատնտեսականներից | Վոր ժամանակի համար | Կոլտնտեսություններից | Կոլտնտեսականներից | Մենատնտեսներից |
| | | | | | | | |

Գյուղխորհուրդների անձնական հաշվի քարտերի «Գյուղխորհրդի գործառնական տվյալների» սյունյակում կոլտնտեսություններից գանձված գումարները չպետք ե ցույց տալ։ Պետբանկի տվյալներում պետք ե արտահայտվեն կոլտնտեսությունների բոլոր տեսակի վճարումները Պետբանկի ապահովագրական ընթացիկ հաշվին անմիջականորեն մուծված։

Ապահովագրական վճարումների գանձման յեռամսյա առաջադրանքների կատարումը՝ գյուղխորհուրդների կողմից պետք ե հաշվի առնել գյուղական բնակչության միջոցների մոբիլիզացիայի պլանի կատարման յեռամսյա տեղեկագրերում («Կոպարային ապահովագրություն» սյունյակներում)։

| Գյուղխորհրդի անունը | Յեռամսյակի առաջադրանքը | Մուտք ե յեղել | | | Վ ո ր ի ց | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Պետբանկի տվյալ. | Գյուղխ. տվյալն. | Պլանի կատարման % Պետբանկի տվյալն. | Կոլտնտեսութ. | Կոլտնտեսական | Մենատնտես. |
| | | | | | | | |

80. Այդ տեղեկագրում յեռամսյակի առաջադրանքներն ու դրանց կատարումը ցույց են տրվում յուրաքանչյուր գյուղխորհրդի համար առանձին։ Առաջադրանքի կատարման տոկոսը վորոշվում ե Պետբանկի տվյալների, այսինքն, ապահովագրական տեսչության ընթացիկ հաշվին մուծված վճարումների գումարի հարաբերությամբ։

Այդ վճարումներն ըստ սոցիալական խմբերի բաժանվում են գյուղխորհրդի տվյալներով։

81. Յեթե ճեղքվածքներ կան, այսինքն, յեթե գյուղխորհուրդների և Պետբանկի տվյալներն իրարից տարբերվում են, ապա անհրաժեշտ ե միջոցներ ձեռք առնել պարզելու դրա պատճառները և շտապ վերացնելու ճեղքվածքը։

82. Վճարումների գանձման ժամկետները լրանալուց հետո կոլտնտեսությունների և գյուղխորհուրդների անձնական հաշիվներում ցույց ե տրվում ապառքը, վորի գումարը տուգվում ե գյուղխորհուրդների տվյալներով։ Ապառքի չափը յուրաքանչյուր առանձին վճարողի (կոլտնտեսականի և մենատնտեսի) համար վորոշվում ե այնտեղ, վորտեղ տրվում և վճարողների անձնական հաշիվները, այսինքն գյուղխորհուրդներում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Այն շրջ. (քաղ.) ֆինբաժիններում, վորտեղ հարկերի գանձման և կոոպարային ապահովագրության ամբողջ հաշվառումը կենտրոնացած ե կոոպարային հաշվետվության խմբում, ապահովագրական վճարումների հաշվառումն ըստ կոլտնտեսությունների և գյուղխորհուրդների անձնական հաշիվների, կարող ե կատարել վոչ թե ապահովագրական տեսչությունը, այլ այդ խումբը։

## 5. Անդորրագրային գրքույկների հաշվառումը

83. Անդորրագրային գրքույկները պետք ե հաշվի առնել և պահել, մատակարարել գյուղխորհուրդներին ու խնայդրամարկղներին, ինչպես նաև անդորրագրեր տալ դրամական վճարումներ ընդունելու առթիվ (նույնը և կոոպարային ապահովագրության գծով) ԽՍՀՄ ֆինժողկոմատի 1935 թ. ապրիլի 28-ի № 353 կարգադրությամբ և գյուղխորհուրդների համար կազմված նույն թվի և ամսաթվի № 352 հրահանգով նախատեսնված կարգով։



## 6. Ինվենտարի հաշվառումը

84. Ապահովագրական տեսչության մոտ յեղած և Պետապին պատկանյալ ամբողջ գույքը (ձիերը, հեծանիվները, պահարանները, սեղանները, աթոռները և այլն) պետք ե հաշվի առնել, ստորին օրգանների համար սահմանված, հետեվյալ ձևերի ինվենտար վերգրով։

| №№ ըստ կարգի | Ումից և ինչ փաստաթղթերով | Գույքի անունը | Քանակը | Միավորի գինը | Գումարը | Նշում գույքը ցուցակից հանելու մասին։ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |

Այս ձևով գույքի հաշվառում կատարվում ե շրջֆինբաժինների հաշվետարության և հաշվետվության վերաբերյալ հրահանգով նախատեսնված կարգով։

## ՊԵՏԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

85. Պետական ապահովագրության հաշվետվությունների ձև շրջանային քաղաքային ապահովագրական տեսչությունների համար(№ 69) սահմանված ե ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1934 թ. 17/12 № 113/2690 վորոշմամբ։ Հաշվետվություն ներկայացնելու համար պահպանված ե մեկ ամսվա ժամկետ։

86. Հաշվետվության հիմնական թվերով (յելքի և մուտքի մասը) կազմում ե շրջ. (քաղ.) ֆինբաժնի հաշվապահը։ Հաշվետվության շրջանառության վերաբերյալ պարզաբանությունները (բոլոր մանրամասնությունները ապահովագրական վճարումների, ապահովագրական վարձատրության մասին և այլն) կազմում ե ապահովագրական տեսուչը։

87. Հաշվետվությունը ստորագրում են շրջ. (քաղ.) ֆինբաժնի հաշվապահը և ապահովագրական տեսուչը ու ներկայացնում Պետապի մարզային-յերկրային վարչությանը կամ հան-

բալանսական վարչությանը (վորտեղ մարզային բաժանում չկա) նրանց կողմից սահմանված ժամկետներում։ Ուղարկված հաշվետվությունների պատճենները պահվում են ապահովագրական տեսչություններում վորպես նյութ տեղեկանքների և վերստուգումների համար։

88. Հաշվետվություններ կազմելու համար վորպես նյութ կարող են ծառայել 1) շրջ. (քաղ.) ֆինբաժինների հաշվապահների նշումներն ապահովագրության ընթացիկ հաշվի վերաբերյալ, 2) մանրամասն հաշվառման տվյալները, վոր ապահովագրական տեսչությունը կազմում է յել և մուտ գործառնությունների ու ապահովագրական վարձատրության վճարման մատյաններով, 3) գյուղխորհուրդների հաշվետվությունները վճարումներ սահմանելու և զեղչելու մասին և 4) հանրայնացված սեկտորի գույքի ապահովագրության վճարումների հաշվառման քարտը (ապահովագրական վճարումների մուծմամբ)։

89. Կոոպերային ապահովագրության վճարումներ սահմանելու վերաբերյալ տեղեկությունները տրվում են հարաճուն հանրագումարներով յուրաքանչյուր կոոպերային կամպանիայի սկզբից, իսկ առաջին յերկու յեռամսյակների ընթացքում վճարումների ավելացումներն ու լրացուցիչ զեղչումները ցույց են տրվում որացույցային տարվա սկզբից։ Ընդվորում, հաշված գումարի մեջ մտնում են՝ հիմնական գումարն ըստ գյուղխորհուրդների և կոլտնտեսությունների ամփոփումների, հետագա ավելացումներն ու պակասը, վորը փոխադրված է նոր կոոպերային թերթերը և առաջադրված գանձելու համար։ Հարաճուն հանրագումարներով տեղեկություններ տրվում են նաև արտոնությունների և զեղչերի մասին, ընդունված, այդ գումարի մեջ մտցվում են՝ հիմնական արտոնությունների գումարները գյուղխորհուրդների և կոլտնտեսությունների սկզբնական ամփոփումների, ինչպես նաև հետագայում տրված բոլոր արտոնությունների և անհուսալի լինելու համար զեղչված ապառքների գումարների համաձայն։

90. Հանրայնացված սեկտորի գույքի պարտադիր ապահովագրության գծով (պրեմյաների վճարմամբ) ցույց են տրվում վճարումների գումարը հարաճուն հանրագումարով տարվա սկզբից։ Այդ գումարի մեջ մտցվում են՝ վճարումների գումարները, վոր սահմանված են յեղել մեկ տարում հիմնական միջոցների համար, վճարումների գումարները, վոր սահմանված են յեղել նախկին և ընթացիկ յեռամսյակներում շրջանառու միջոցների



համար, ինչպես նաև վճարումների գումարները, վոր սահմանված են յեղել հաշվետու ամսում հայտնաբերված այն նոր հիմնարկների և ձեռնարկությունների համար, վորոնք որենքով պարտավոր են իրենց գույքն ապահովագրելու։

91. Հաշվետվության մնացած բոլոր տվյալները՝ մուտքն ու վճարումները, ցույց են տրվում հարաճուն հանրագումարներով յեռամսյակի սկզբից։

92. Ապահովագրական գանձումները ցույց են տրվում բացառությամբ վերադարձումների։ Յեթե վերադարձումը մուտքից ավելի յէ, ապա տարբերությունը մուտքի մասում ցույց է տրվում կարմիր թանաքով։ Ապահովագրության տույժերը (կոոպերային ապահովագրության և հանրայնացված սեկտորի գույքի ապահովագրության վերաբերմամբ) ֆինհաշվետվության մուտքի մասում ցույց է տրվում ապահովագրական գանձումներին միացված։

63. Կամավոր գերկոոպերային ապահովագրության տոկոսային վարձատրության գումարները հաշվետվության մեջ ցույց են տրվում ազատ տողերից մեկում։

94. Հրդեհի և անասունների անկման դեմ պայքարելու ձեռնարկումների համար ծախսված գումարների դիմաց պետք է ցույց տալ վարչության համապատասխան կարգադրությունները այդ ձեռնարկումների համար դրամ ծախսելը թույլատրելու մասին։

95. Պետապի վարչությանը մուծված ու փոխադրված բոլոր դրամական գումարները ցույց են տրվում հաշվետվության մեջ, նշելով փոխադրության թվարկը և յուրաքանչյուր առանձին գումարը։

96. Հաշվետվության մեջ ցույց տրված «Վարչության հաշվին վճարումներ» հաշվետվության իր մեջ, կամ ուղեկցող նամակում պետք է պարզաբանել՝ թե վոր վճարումների մասին է խոսքը և Վարչության վոր կարգադրությամբ են դրանք կատարված։ Այդ հոդվածով անց են կացվում նաև մասսայական աշխատանքների ծախսերը՝ կոոպերային գանձումների 3/4%-ային մասհանումների հաշվին—(յեթե թույլատրված են յեղել Պետապի վարչության կողմից և փաստորեն վճարել են)։

97. «Ընթացիկ հաշվի մնացորդ» հոդվածում ցույց են տրվում՝

ա) Մուտքի մասում—առ 1-ն հաշվետու ամսվա մնացորդ գումարը,

բ) Յելքի մասում—առ 1-ն հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մնացորդ գումարը։ Մնացորդ գումարն ստացվում է մուտքի հանրագումարից յելքի հանրագումարը հանելու միջոցով։ Մնա-

ցորդը պետք է համապատասխանի ապահովագրական տեսչության ընթացիկ հաշվում (Պետբանկի) առ նույն թիվն առկա գումարին, ինչպես նաև գործառնությունների հաշվառման հիմնական հաշվապահական տվյալների համաձայն (որը շրջ. (քաղ.) ֆինբաժնի հաշվապահն է կատարում) պետապահովագրության ընթացիկ հաշվում մնացորդ յեղած գումարին։

Ուղարկվող ֆինհաշվետվությանը պետք է կցել Պետբանկի տեղեկանքն, ընթացիկ հաշվում առ 1-ն հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մնացորդ գումարի մասին։

98. Գյուղական և քաղաքային կոպարային ապահովագրության գանձումները ցույց են տրվում «Շրջանառությունների առթիվ պարզաբանություններ»-ում, բաժանելով ըստ սոցիալական խմբերի։ Այդ գումարներն ըստ կոլտնտեսությունների և մենատնտեսների բաժանել (սկզբնական փաստաթղթերում նման բաժանում չլինելու պատճառով) կարելի յե այնպես, ինչպես ըստ նույն խմբերի բաժանված են միջոցների մոբիլիզացիայի ամփոփումներում (համեմատաբար)։

99. Այն դեպքերում, յեթե մուտք է լինում ուղեվորների (ճանապարհին) պարտադիր կոպարային ապահովագրության գծով, այդ գումարները հաշվետվության մեջ «Մուտքի շրջանառությունների առթիվ պարզաբանումներ»-ում ցույց են տրվում առանձին տողով։

100. Կոպարային ապահովագրության գծով վճարված ապահովագրական վարձատրության գումարները «Պարզաբանություններում» ստորաբաժանվում են գույքի և ապահովագրական պատասխանատվության առանձին տեսակների (հրդեհից և տարերային աղետներից, գյուղատնտեսական մշակույթները կարկտից, գյուղատնտեսական մշակույթները թրջումից և ցրտահարումից և այլն), ըստ սոցիալական խմբերի, ինչպես նաև ըստ գյուղի և քաղաքի։ Քաղաքի վերաբերմամբ ապահովագրական վարձատրությունը ցույց է տրվում ըստ ապահովագրական առանձին և հիմնական օբյեկտների միայն՝ շենքերի (հրդեհներից), գյուղատնտեսական մշակույթների և անասունների։ Հաշվետվության մեջ յեղած սյունյակների համեմատ բաժանվում են նաև ապահովագրական վարձատրության գումարներն ըստ կամավոր և այլ տեսակի ապահովագրության։

101. Վարչա-տնտեսական ծախքերը «Պարզաբանություններում» ցույց են տրվում ըստ ծախսերի առանձին հոդվածների, բաժանելով կանխյալ (կառավարչական) և անկախ (գործառնական) ծախսերի։ Ըստ հաշվետվության ունեցած հոդվածների բաժանվում են նաև նախազգուշական ձեռնարկումների ծախսերը։ Այդ ծախսերի մասին մանրամասն տեղեկություններ (շրջանային ֆին. հաշվետվությամբ չնախատեսնված ձեռնարկումների զառումը) տրվում են ֆինհաշվետվությանն ուղեկցող նամակում յեռամսյակում մեկ անգամ։

102. Յուրաքանչյուր հաշվետվության մեջ ցույց են տրվում ռուբլիներով գյուղական կոպարային ապահովագրության հասուտացված, բայց չվճարված մնասները՝ առանձին կոլտնտեսությունների և առանձին կոլտնտեսականների ու մենատնտեսների համար։ Դեկտեմբերյան հաշվետվությանն այդ ցուցանիշների փոխարեն կցվում են (հաշվետվության առանձին բլանկի վրա) տեղեկություններ հաստատված, բայց չվճարված մնասների մասին բոլոր տեսակի ապահովագրության, ինչպես նաև հաշվետվությամբ նախատեսնված ապահովագրական վարձատրության ցուցանիշների վերաբերմամբ։

103. Յեթե ամսական հաշվետվությունն արդեն կազմված է ուղարկված է վերադաս ապահովագրական օրգանին, ապա այդ ամսվա շրջանառությունների բոլոր լրացուցիչ անհրաժեշտ գրանցումները կամ ուղղումները պետք է հաջորդ ամսվա հաշվետվության մեջ կատարել, մուտք գրելով կամ մտցնելով յելքի մասը հաշվետվության համապատասխան հոդվածներով։

104. Ֆինհաշվետվության շրջանառության այն բոլոր փոփոխությունները, որ առաջարկում է Պետապի վարչությունը հաշվետվությունն ստուգելուց հետո, ապահովագրական տեսչությունը պետք է մտցնի մոտակա հերթական հաշվետվության մեջ առանց որևե հապաղման։

105. Ապահովագրական տեսչությունը պարտավոր է ֆինանսական հաշվետվությունները ժամանակին ուղարկել ու նրանց մեջ լրիվ նյութ տալ, այսինքն, ամբողջովին ընդգրկել այն բոլոր գործառնությունները, որ կատարել է պետական ապահովագրությունը շրջանում կամ քաղաքում հաշվետու ամսվա ընթացքում։

Շրջֆինբաժինների համար կազմված 1932 թ. 5/4—հրահանգը պետական ապահովագրության գործառնությունների հաշվառման և հաշվետվության մասին վերանում է։

ԽՍՀՄ Պետապի գլխ. վարչ. պետ՝ ԱՐԱԼՈՎ

№ 3

1935 թ. 3/6

Ճիշտ է՝ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

I ՄՏԻՑ ՊԵՏԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄՏԻՑ-ՅԵԼԻՑ ՄԱՏՅԱՆ

Կցում № 1.

Շրջան ..................

| Ամիս և թիվ | | ԱՊԱՀՈՎԱՎՃԱՐ | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ԿՈՊԱՐԱՑԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐ | | | | | | | ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹ. | | | | | | | | ԿՅԱՆՔԻ | | | | |
| | | Գյուղական | | | Քաղաքային | | | | Գերկոպար. | | Կայուն գ. | | Տնային գույք և այլն | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | Գյուղական | | Քաղաքային | | | | | | |
| | | | | | | | | | Հանրային սեկտ. | Մասն. սեկտ. | Հանրային սեկտ. | Մասն. սեկտ. | Հանր. սեկտ. | Մասն. սեկտ. | Հանր. սեկտ. | Մասն. սեկտ. | Խմբակային | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

II ՑԵԼԻՑ

| Ամիս և թիվ | | | ՎՃԱՐՈՒՄՆԵՐ ՆԱԽԱԶԳՈՒՇ. ՄԻՋՈՑԱՌ. | | | | | | | ՏՈԿՈՍԱՅԻՆ ՎԱՐՁ. | | | ՎԱՐՁԱ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾԱԽՔԵՐ | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

Կցում № 2
Ձև № 2

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՏՅԱՆ

Շրջան ..................

| Ամիս և թիվ | | | ԿՈՊԱՐԱՑԻՆ ԳՅՈՒՂԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹ. | | | | | | | | ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐ | | | | | | | | ՄԵՆԱՏՆՏԵՍՈՒԹ. | | | | | | | |
| | | | | Գյուղատնտ. մշակ. | | | | | | | | Գյուղ մշակույթ. | | | | | | | | Գյուղ. մշակույթ. | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 | 27 |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

| ԿՈՊԱՐԱՑԻՆ ՔԱՂ. ԱՊԱՀՈՎ. | | | | Ջկնորսային նավերի և գործիքն. | | Պարտադ. ապահովագր. հանրայնաց. սեկտորի | | ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ | | | | | | | | | | | | ԿՅԱՆՔԻ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ԿՈԼ. ՏՆՏԵՍ. | ԱՇԽ. ԲՆԱԿՉ. | | | | | | | ԳԵՐԿՈՊԱՐԱՑԻՆ | | | | ԿԱՅՈՒՆ ԳՈՒՅՔ. | | | | ՏՆԱՅԻՆ ԳՈՒՅՔ. | | | | | | |
| | | | | | | | | Գյուղակ. | | Քաղաք. | | Գյուղակ. | | Քաղաք. | | Գյուղակ. | | Քաղաք. | | | | |
| | | | | Հանր. սեկտ. | Մասն. սեկտ. | | | | | | | | | | | | | | | Խմբակային | | |
| 30 | 31 | 32 | 33 | 34 | 35 | 36 | 37 | 38 | 39 | 40 | 41 | 42 | 43 | 44 | 45 | 46 | 47 | 48 | 49 | 50 | 51 | 52 |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

ՀՀ Ազգային գրադարան
NL0937808

13 ФЕВ 1936

II
28382